ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

№_____-Ա « ____ » _____ **2019թ.**

ք.Երևան

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-ի N 17-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125, 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 1106-Ն և 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշումների պահանջները, ինչպես նաև պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու գործընթացն արդյունավետ իրականացնելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել գույքի հանձնման-ընդունման հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվող անշարժ գույքի հանձնման-ընդունման գործընթացն իրականացնելու նպատակով և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝

1) վարձակալության և անհատույց օգտագործման պայմանագրերով սահմանված ժամկետում իրականացնել գույքի հանձնման աշխատանքները:

2) վարձակալության և անհատույց օգտագործման պայմանագրերի դադարման (լուծման) պահից 10-օրյա ժամկետում իրականացնել գույքի ընդունման աշխատանքները:

3. ՈՒԺը կորցրած ճանաչելու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2012 թվականի փետրվարի 14-ի «Հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2008 թվականի հոկտեմբերի 6-ի N 93-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 17-Ա հրամանը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Պետական գույքի կառավարման կոմիտեի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատարին:

23.05.2019

X

VERIFIED OCSP 23/05/19 16:59:17 GMT+4

Signed by: BABAYAN NAREK 2714840543

ՆԱՐԵԿ ԲԱԲԱՅԱՆ

Հավելված
Պետական գույքի կառավարման
կոմիտեի նախագահի 2019 թվականի ---
--------—— -----ի
----------Ա հրամանի

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Աննա Վարդազարյան	Պետական գույքի տնօրինման վարչության Պետական գույքի վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրման բաժնի պետ, հանձնաժողովի նախագահ
Անի Եսայան	Իրավաբանական վարչության պայմանագրերի նախապատրաստման, կնքման և պայմանագրային պարտավորությունների հսկողության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Գևորգյան Գոհարիկ	Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության Հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Ասատրյան Վահագն	Պետական գույքի տնօրինման վարչության Պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ